Ազդարարության փող

Trumpet's Sound

50-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2019

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նրանք տեսան, եկան, երկրպագեցին . . . . . Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Մարգասրահ. . . . . Հովիվ՝ Ռաֆֆի Զափարյան

Կոտրվելով գեղեցկանալ . . . . . Քաղված

Գնացե՛ք... և ավետարանը քարոզե՛ք (3) . . . . . Մանկանց ավետ. ընկ.

Նայի՛ր ու աստղերը հաշվի՛ր . . . . . Դոն Սթորմըր

Եկեղեցու պատմությունը (4) . . . . . QMBC պանորամա

Ծերերը՝ Նոր Կտակարանում . . . . . Վարդան Սարգիսյան

Եվս մեկ առաջադրանք . . . . . Ռեքս Տիրլավ

Վրեժխնդիր մի՛ եղեք . . . . . Քաղված

Զգուշացե՛ք անգործությունից . . . . . Դոկտ. Զեսլո Բասսարա

Փրկության վստահությունը . . . . . Ներսես Պոյաճյան

Ո՞վ կարող է լուծել մեր խնդիրները . . . . . Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Այդ մարդը դու ես . . . . . Քաղված

Նրանք տեսան, եկան, երկրպագեցին և փոխեցին իրենց ճամփան

Նրանք տեսան

Իմաստունները՝ աստղը տեսնող մոգերը, ավելի իմաստուն էին, քան իրենց ժամանակակից մարդիկ, քանի որ նրանք գիտեին Աստծո Որդու մասին, ով ծնվելու էր Բեթլեհեմում: Միքիա 5:2-ում կարդում ենք. «Եվ դո՛ւ, ո՛վ Բեթղեհեմ Եփրաթա, թեև փոքր ես Հուդայի հազարավորների մեջ, սակայն քեզանից պիտի դուրս գա Ինձ համար նա, ով Իսրայելի իշխանն է լինելու, ում ելքը հնուց, հավիտենական օրերից է»: Այս խոսքը գրվել է մ.թ.ա. 8-րդ դարում Միքիա մարգարեի կողմից: Հարյուրավոր տարիներ առաջ մոգերը որոշեցին ճամփորդություն կատարել անապատի միջով՝ քաջատեղյակ լինելով իրենց հանդիպելիք դժվարությունների մասին:

Նրանք եկան

Բոլոր դժվարություններից հետո նրանք եկան Փրկչին՝ Թագավորին տեսնելու: Ի՜նչ մեծ ուրախություն էր Աստծուն տեսնելը, ով մանկան տեսքով մեղավոր աշխարհ էր եկել մարդկության փրկության համար: Ի՜նչ ուրախություն էր նրանց համար Մեսիային տեսնելը:

Նրանք երկրպագեցին

Իմաստունները ծունկի եկան՝ երկրպագելու ու մեծարելու այն Մեկին, որի համար բերել էին իրենց նվերները. «Եվ տունը մտնելով, տեսան մանկանն իր մոր՝ Մարիամի հետ և ընկան ու երկրպագեցին Նրան: Հետո բացելով իրենց գանձերը՝ ընծաներ մատուցեցին Նրան՝ ոսկի, կնդրուկ և զմուռս» (Մատթ. 2:11):

Նրանք նույն ճանապարհով չվերադարձան

Իմաստուն մարդիկ արձագանքեցին Աստծո կոչին: Նրանք եկան և երկրպագեցին: Սակայն Հերովդեսը ուզեց նրանցից իմանալ մանուկի գտնվելու վայրը՝ նրան սպանելու համար: Ուստի Աստված երազի մեջ երևաց մոգերին ու պատվիրեց չվերադառնալ Հերովդեսի մոտ:

Նրանք հնազանդվեցին և ուրիշ ճանապարհով վերադարձան իրենց երկիր:

Գուցե սա կարևոր պատգամ է քեզ համար: Դու հավատում ես Աստվածաշնչում մեղքի մասին Աստծո ասածին: Դու ապաշխարել ու ընդունել ես Նրա փրկությունը: Տեր Հիսուսը եկել է սրտիդ մեջ, և այժմ դու երկրպագում ես Նրան՝ որպես հզոր Աստծո ու Փրկչի՝ իմանալով, որ փրկությունը միայն Նրա միջոցով է:

Այժմ մենք երկրպագում ենք Նրան, հաղորդակցվում մեր միջնորդի, Տիրոջ և վարդապետի հետ: Մենք չենք ուզում երկրպագել ուրիշին: Մենք պետք է հնազանդվենք Նրան և չվերադառնանք մեր հին ճանապարհներին:

Իմաստունները հնազանդ էին և իրենց տուն վերադարձան ուրիշ ճանապարհով: Արդյոք պատրա՞ստ ենք հրաժարվել մեր հին ճանապարհներից, ցանկություններից, փափագներից, ծրագրերից և ամբողջությամբ հնազանդվել Տեր Հիսուսին՝ Նրա անունը մեծարելու համար:

Այսօր Տիրոջից կարող ենք ստանալ հավիտենական կյանքի պարգևը՝ ընդունելով Նրան՝ որպես մեր Տիրոջ ու Փրկչի: Աղոթքս է, որ հաղթական դառնաք Քրիստոսով և ժառանգեք հավիտենականությունը:

Հ. Գ.

Մարզասրահ

Մարզասրահ հաճախո՞ւմ եք: Ես ամեն շաբաթ փորձում եմ երկու կամ երեք անգամ գնալ այնտեղ: Արդյոք ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչն է անհանգստացնում ինձ, երբ մարզասրահ եմ մտնում: Ես նեղվում եմ, երբ տեսնում եմ, թե ինչպես են մարդիկ նստում նստարանին և 5-10 րոպե իրենց բջջային հեռախոսներով զբաղվում:

Ես հակառակ չեմ մարզումներ անելու ժամանակ երաժշտություն լսելուն, բայց եթե մարզասրահ ենք մտնում սարքավորումների կողքը

նստելու և ոչ թե մարզվելու, քրտնելու, մարզասրահից ավելի թարմացած դուրս գալու համար, ապա լուրջ խնդիր ունենք: Այդպես անելով՝ մարզասրահ գալը չի ծառայում իր նպատակին:

Ավելի վատ է, երբ տեսնում ես, որ մարդիկ մարզվելու փոխարեն սկսում են երկար ժամանակ իրար հետ զրուցել մարզասրահում: Երբեմն մտնում եմ մարզասրահ ու տեսնում մի քանիսին, որ զրույցի են բռնվել: Դուրս գալու ժամանակ նկատում եմ, որ նրանք նույնիսկ մեկ կաթիլ քրտինք չեն ունեցել ու տակավին զրուցում են իրար հետ: Գուցե մեկ-երկու շարժում են արել, բայց քրտնելու չափ չեն մարզվել:

Մարզվելը նվիրում է ենթադրում: Ես նկատի ունեմ հետևյալը. եթե դուք պատրաստ եք գումար վճարել և մարզասրահի հաճախորդ դառնալ, ապա պետք է մարզասրահն օգտագործեք այն բանի համար, ինչի համար այն նախատեսված է:

Եթե ուզում եք մարզանքով զբաղվել, ապա այն ձեր ամբողջ սրտով կատարեք: Եթե ընկերների և ընտանիքի անդամների հետ ժամանակ եք անցկացնում, ապա այդ ժամանակն ամբողջապես նրանց նվիրեք: Ձեր ամբողջ ուշադրությունը դարձրեք այն բանին, ինչ ունեք ձեր ձեռքերում տվյալ պահին: 100%-ով նվիրվե՛ք ձեր արած գործին: Աստվածաշունչն ասում է. «Ձեռքդ ինչ որ գտնի անելու, արա քո ամբողջ ուժով» (Ժող. 9:10):

Ցավոք սրտի, կան քրիստոնյաներ, ովքեր նվիրված կյանքով չեն ապրում, 100%-ով Աստծուն չեն տրվում: Եկեղեցի են գալիս, բայց իրենց ուշադրությունը կենտրոնացած չէ: Որոշ քրիստոնյաներ նույնիսկ հավատարիմ կերպով եկեղեցի չեն հաճախում և երբ եկեղեցում ծառայություն են անում, ամբողջ սրտով չեն անում:

Արդյոք դուք ա՞յն քրիստոնյաներից եք, ովքեր կանգնում են սարքավորումների կողքին և կենտրոնացած ու նվիրված կյանքով չեն ապրում: Թո՛ւյլ տվեք քաջալերել ձեզ ձեր լավագույնը անել և 100%-ով տրվել Աստծուն: Ինչ անում եք, ամբո՛ղջ սրտով արեք, Աստծո համար ապրե՛ք ու ծառայե՛ք Նրան ձեր ամբողջ ուժով:

Ռաֆֆի Չափարյան

Կոտրվելով գեղեցկանալ

Պարսկաստանի Թեհրան քաղաքի թագավորական պալատում կարող եք տեսնել աշխարհի ամենագեղեցիկ խճանկարներից մեկը: Առաստաղները և պատերը բազմակողմանի ցոլքերով փայլում են ադամանդի պես:

Ըստ նախնական ծրագրի՝ պալատի հատակագիծը կազմելիս ճարտարապետն ուզում էր հայելու հսկայական կտորներ տեղադրել պատերի վրա: Երբ ստացան Փարիզից պատվիրված առաջին բեռնարկղը, սոսկումով տեսան, որ հայելիները փշրված են: Շինարարը կտորներն աղբը նետեց և տխուր լուրը հաղորդեց ճարտարապետին:

Զարմանալի բան, հնարամիտ ճարտարապետը հանձնարարեց հավաքել բոլոր կոտրված կտորները, ապա փշրել և փակցնել պատերին՝ դրանք վերածելով արծաթափայլ ապակե հրաշալի մոզաիկայի:

Կոտրված՝ գեղեցիկ լինելու համար: Կարելի է քո սպիներն աստղերի վերածել, և ավելի ընտիր լինել կոտրված լինելու շնորհիվ: Շատ դժվար է աշխարհի մեծագույն թանգարաններում գտնել առարկաներ, որոնք կոտրված չեն: Իրականում՝ այնտեղ գտնվող գլուխգործոցներից շատերը միայն մասնիկներ են, որ մնացել են որպես սրբագործված հիշատակ փառավոր անցյալից:

Երբեք մի՛ թերագնահատեք աստվածային զորությունը: Կոտրվելով՝ օգտագործվե՛նք հրաշագործ Արարչի ձեռքերում, որ փայլենք Նրա համար և շատերին ուղղորդենք դեպի Նրա թագավորությունը: Այդպես անելով՝ «Իմաստունները երկնքի հաստատության լույսի պես պիտի փայլեն հավիտյանս հավիտենից, իսկ շատերին արդարության առաջնորդողները՝ աստղերի պես» (Դան. 12:3): Ամեն:

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

❋ ❋ ❋

«Գնացե՛ք... և ավետարանը քարոզե՛ք»

Մաս 3

Ինչո՞ւ պետք է անեմ դա

Տերը կանչում է ինձ ու քեզ և հանձնարարում է անել մի բան, որն այդքան էլ հեշտ չէ: Միգուցե քեզ մոտ հարց ծագի ինչո՞ւ պետք է անեմ դա:

Մեծ Հանձնարարականի մասին չորրորդ անգամ նշված է Հովհ. 20:21-ում, որն էլ տալիս է այդ հարցի պատասխանը: Հիսուսը նորից նրանց ասաց. «Խաղաղություն ձեզ, ինչպես Հայրն Ինձ ուղարկեց, այդպես էլ Ես ձեզ եմ ուղարկում»:

Այս համարը նշում է, թե որն է միսիոների շարժառիթը: Այն կարճ, բայց հստակ բացատրում է, թե ինչու պետք է ավետարանես: Ինչո՞ւ: Որովհետև Նա է ուղարկել քեզ: Նա քեզ պատվիրել է և հանձնարարել, որ այդպես վարվես:

Այս համարի մեջ Տեր Հիսուսը համեմատում է Իր՝ Հոր կողմից ուղարկված լինելը, մեր՝ Իր կողմից ուղարկված լինելու հետ: Իհարկե, այս երկուսի միջև տարբերություն կա, բայց միևնույն ժամանակ Տեր Հիսուսն ասում է, որ դրանք նույնն են՝ օգտագործելով այս երկու բառերը՝ «ինչպես... այնպես»:

Տեր Հիսուսի ուղարկված լինելը նշանակում էր՝

- զոհաբերություն (Ա Հովհ. 2:2),
- տառապանք (Ա Պետ. 2:21),
- փնտրելու ծառայություն (Ղուկ. 19:10),
- փրկելու ծառայություն (Ղուկ. 19:10),
- բավարարված լինելու զգացողություն (Ես. 53:11):

Այսպիսով, Տեր Հիսուսը ուղարկում է ինձ և քեզ՝

- զոհաբերելու (Բ Տիմ. 2:4),
- նեղություններ կրելու (Բ Տիմ. 2:3),

- փնտրելու (Մատթ. 4:19),
- փրկելու, առաջնորդելու Քրիստոսի մոտ (Ա Կորնթ. 9:22),
- բավարարված լինելու (Մատթ. 19:29): Այս ամենի վարձքը շատ մեծ կլինի:

Պետք է հնազանդվենք Նրա պատվերին, քանի որ Նա է ուղարկում մեզ: Նա Իր կամքով գնաց, տառապանք կրեց և օգնություն ցուցաբերեց: Այդպես էլ մենք պետք է վարվենք:

Ինչպե՞ս կարող եմ հնարավորինս դա անել

Գործք 1:8-ում, որտեղ Տեր Հիսուսը հինգերորդ անգամ նշում է, թե ինչպես կարող ես այն կատարել. «Բայց դուք զորություն պիտի ստանաք, երբ Սուրբ Հոգին ձեր վրա գա, և իմ վկաները պիտի լինեք և Երուսաղեմում, և ամբողջ Հրեաստանում, և Սամարիայում, և երկրի ամենահեռավոր ծայրերում»:

Զորությունը Սուրբ Հոգուց է, ով զորություն է տալիս: Աստված ուզում է, որ լինես կամեցող անոթ և պատրաստ՝ օգտագործվելու Տիրոջ կողմից: «Քանի որ ավետարանը ոչ միայն խոսքով քարոզվեց ձեզ, այլ նաև զորությամբ, Սուրբ Հոգով և կատարյալ համոզմունքով» (Ա Թես. 1:5): Պողոսը ոչ միայն խոսքերով էր քարոզում, այլ նաև Սուրբ Հոգու զորությամբ:

Մենք աղոթում ենք երեխաների հոգևոր արթնության համար, որ՝

- երեխաները ցանկություն հայտնեն հրաժարվելու մեղքից,
- վստահեն Տեր Հիսուսին,
- նրանց կյանքերը փոխվեն:

Տեր Հիսուսը մեզ տվել է Իր վերջին հանձնարարականը: Այդ հանձնարարականի մեջ նա կարճ, բայց հստակ ընդգծել է Ավետարանի պատգամը, մեթոդները, շարժառիթները և միջոցները: Այժմ Նա մեր սրտի պատասխանն է ակնկալում. «Ահա Ես, ի՛նձ ուղարկիր» (Ես. 6:8բ):

Մանկանց ավետարանչության ընկերացկություն

Նայի՛ր ու աստղերը հաշվի՛ր

Կարդացե՛ք Ծննդոց 15-րդ գլուխը

Ծննդոց 15-րդ գլուխը գլխավորապես վերաբերում է Աստծո՝ Աբրահամի հետ կնքած ուխտին: Այդուհանդերձ այդ պատմությունը մեզ համար շատ դասեր ունի, քանի դեռ ապրում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի համար: Աբրահամին տեսնում ենք որպես հավատքի մարդու, իսկ Աստծուն որպես ուխտ պահող Աստծո, ով պաշտպանում է Իր ժողովրդին:

Պատմությունը սկսվում է հետաքրքիր մի միջադեպով, որը հավանաբար կապ ունի 14-րդ գլխի հետ, որտեղ տեսնում ենք Աստծո խրնամքն Աբրահամի նկատմամբ: Աստված հայտնվում է Աբրահամին երազում ու պատվիրում չվախենալ, քանի որ Ինքը նրա վահանն է: Աբրահամը հավանաբար որոշ չափով վախեցած էր: Գուցե Արևելքի չորս թագավորներին պարտության մատնելուց հետո նա վախենում էր, որ նրանք վերադառնան և հարձակվեն իր վրա: Անակնկալ կերպով հարձակվելն Աբրահամի ռազմավարության կարևոր բաղադրիչներից մեկն էր, և գուցե նա մտածում էր, թե այդ նույն թագավորները կվերադառնան իրենց կորցրածը վերականգնելու համար: Գուցե նա նաև մտածեց, թե արդյոք անմի՞տ գտնվեց՝ վերադարձնելով Սոդոմի թագավորին պատկանող ամբողջ ավարը: Ի՞նչ վարձատրություն ստացավ Աբրահամն իր կատարած բոլոր վտանգավոր գործերի դիմաց: Արդյոք ապահովությա՞ն մեջ էր: Աստծո Խոսքը նրան եկավ՝ ասելով. «Մի՛ վախենա, Աբրա՛մ, Ես քո վահանն եմ և քո մեծագույն վարձատրությունը»: Աստված խոստացավ Աբրահամին Իր պաշտպանությունը: Բայց այս ամենից ավելի Աստված էր Աբրահամի վարձատրությունը:

Սակայն Աբրահամի արձագանքը ցույց է տալիս, որ իր մտքերն ուրիշ տեղում էին: Եթե նա վախենում եր, ապա ավելի հավանական է, որ այդ վախն Աստծո խոստման չիրագործման վախն էր, որ իր սերունդը մեծ ազգ էր դառնալու: Աբրահամի ժառանգը նրա տան մեջ ծնած մարդն էր, որ իր որդին չէր: Այս ամենը հաշվի առնելով՝ Աբ-

րահամը հարցրեց Աստծուն, թե ինչ վարձք է ստանալու: Եթե Աստված էր իր վարձատրությունը, ապա արդյոք Նա իրեն զավակ պարգևելո՞ւ էր: Ուստի Աստված Աբրահամին վստահեցրեց, թե Եղիազարը չէ նրա ժառանգը, այլ նա, ով իր երանքից է դուրս գալու:

Աստված հաստատեց Աբրահամին տված Իր խոստումը՝ նրան դուրս բերելով և մարտահրավեր տալով, որ գիշերային երկնքի աստղերը հաշվի: Աստված Աբրահամին խոստացավ, որ նրա ժառանգներն անհամար աստղերի չափ շատ են լինելու: Աբրահամը հավատաց Եհովային, ով Աբրահամի հավատքն իր համար արդարություն համարեց:

Տերը շարունակեց Աբրահամին ցույց տալ Իր պատասխանը՝ հիշեցնելով, որ Ինքն է Տերը, ով իրեն դուրս հանեց քաղդեացիների Ուր քաղաքից, որպեսզի տա իր պանդխտացած երկիրը՝ որպես ժառանգություն: Աբրահամը հարցրեց Տիրոջը՝ ինչպե՞ս է իմանալու, թե ժառանգելու է այդ երկիրը: Այս հարցի պատասխանը սպառիչ ապացույց էր լինելու, որը փարատելու էր Աբրահամի յուրաքանչյուր կասկած Աստծո՝ իրեն պաշտպանելու կարողության և խոստումները պահելու վերաբերյալ:

Աստված Աբրահամին պատվիրեց, որ երեք տարեկան մի երինջ, երեք տարեկան մի այծ, երեք տարեկան մի խոյ, մի տատրակ և աղավնու ձագ բերի: Աբրահամն այս բոլորը Տիրոջը բերեց, մեջտեղից կիսեց դրանք և յուրաքանչյուր կտոր մեկը մյուսի դիմաց դրեց, բայց թռչուններին չկտրեց: Ի՞նչ էր այս գործողությունների նշանակությունը:

Երեմիայի մարգարեությունը բացենք՝ իմանալու այս ամենի նշանակությունը: Երեմ. 34:18,19-ում կարդում ենք. «Եվ այդ մարդկանց, որոնք զանց առան Իմ ուխտը, որոնք չկատարեցին այն ուխտի խոսքերը, որ Իմ ներկայությամբ արեցին, երբ զվարակը բաժանեցին երկու կտորի և կտորների միջով անցան, նրանց իրենց թշնամիների ձեռքը և նրանց հոգին պահանջողների ձեռքը պիտի մատնեմ»: Ըստ էության սա նշանակում է, որ երբ մարդիկ հանդիսավոր ուխտ էին կնքում, կենդանական զոհը երկու մասի էին կիսում ու անցնում դրա միջով: Իրականում իրենց այդ քայլով ուզում էին ասել՝ ով որ չպա-

հի իր խոստումը, պատրաստ է կենդանու նման մեջտեղից կիսվելու: Մինչ Աբրահամը պատրաստում էր զոհը, նա պատրաստվում էր Աստծո հետ ուխտի մեջ մտնելու:

Ըստ պատմության՝ մինչ արևը մայր մտներ, խոր քուն եկավ Աբրահամի վրա և մեծ խավարի սոսկում ընկավ: Այնուհետև Աստված խոսեց Աբրահամի հետ ու ասաց, թե ինչ էր պատահելու նրա սերնդի հետ: 400 տարի անց նրանք ստանալու էին այն երկիրը, որտեղ Աբրահամն էր գտնվում: Նրա սերունդը՝ որպես օտարական ու պանդուխտ, բնակվելու էր մի երկրում, որն իրեն չէր պատկանում և ծառայելու էր այդ երկրի մարդկանց: Ծառայությունը հաճելի չէր լինելու նրանց համար, և նրանք 400 տարի չարչարվելու էին: Սակայն Աստծո՝ Աբրահամի հետ կնքած խոստման համաձայն՝ նրանք, ովքեր Աբրահամին անիծեցին, Աստծո անեծքի տակ էին մտնելու: Աստված դատելու է Աբրահամի սերնդին նեղություն տվող ազգին: Աբրահամի սերունդը չորրորդ դարում կրկին վերադառնալու է: Նրանք անմիջապես չեն ստանալու իրենց ժառանգությունը, քանի որ ամորհացիների անօրինությունը դեռ լրացած չէ, և դատաստանն անմիջապես չի կատարվելու նրանց վրա:

Սրանից հետո լավ ուսուցում ենք ստանում Աստծո ճանապարհների մասին. «Եվ երբ արևը մայր էր մտնում, Աբրամի վրա մի խոր քուն իջավ, և ահա նրա վրա մի մեծ խավարի սոսկում ընկավ: Ահա այն կտորների միջով մի ծխացող հնոց և մի վառվող ջահ անցավ»: Սակայն Աբրահամը չանցավ զոհված կենդանիների երկու կեսի բաժանված մարմինների մեջտեղով: Այսպես Աստված ցույց տվեց, որ Ինքն անպայմանական ուխտ է կապում Աբրահամի հետ: Մի օր Աստված Աբրահամի սերնդին տալու էր ողջ երկիրը՝ Եգիպտոսի գետից մինչև մեծ գետը՝ Եփրատը, երկիր, որտեղ այդ ժամանակ բնակվում էին տասը տարբեր ժողովուրդներ:

Որո՞նք են այն ճշմարտությունները, որոնք պետք է հասկանանք: Նախ՝ Աստծո համար հաճելի կյանքը հավատքի կյանքն է: Եթե Աստված բան է ասում, ուրեմն մեր պարտականությունն է հավատալ Նրան:

Աստված պահելու է Իր խոստումը. խոստման կատարումը գուցե

շուտով չլինի, բայց այն անպայման կիրագործվի: Աբրահամի ժառանգները երկիրը ժառանգելու էին հարյուրավոր տարիներ անց, բայց խոստումը պահվելու էր: Աստված երբեք չի ձախողվում՝ անելու այն, ինչ խոստացել է անել:

Աստծո բազմաթիվ խոստումներ անպայմանական են: Եթե Աստված անպայմանական ուխտ է կնքում, այդ ուխտով Իր խոստացած օրհնությունները բացառապես Իրենից են կախված լինում: Մենք կարող ենք ավելի մեծ վստահություն ունենալ, որ կստանանք այն, ինչ Նա խոստացել է, քանի որ թեև հաճախ ձախողվում ենք, սակայն Նա երբեք չի ձախողվում:

Եթե արձագանքենք Աբրահամի նման և հավատանք Աստծուն, ապա Նա առանց որևէ պայմանի կպահի մեզ. մենք Նրանն ենք հավիտյան:

Դոն Սթորմըր

«Օ՜հ, սիրելի՛ բարեկամ, եթե սիրում ես զավակներիդ, ապա խորհուրդ եմ տալիս թույլ չտալ նրանց աղոթք անելու սովորությունն անտեսել վաղ մանկության ժամանակ: Եթե ուզում ես զավակներիդ վարժեցնել ինչ-որ բանի մեջ, ապա գոնե սովորեցրո՛ւ նրանց աղոթելու սովորություն ունենալ»:

Ճ. Ս. Ռայլ

«Մովսեսը քառասուն տարի անցկացրեց՝ մտածելով, թե ինքը ինչ-որ մեկն է, ևս քառասուն տարի՝ սովորելով, որ ինքը ոչինչ է, ևս քառասուն տարի՝ բացահայտելով, թե Աստված ինչ կարող է անել ոչինչ եղող մարդու հետ»:

Տ. Լ. Մուդի

«Ավելի շատ ուզում եմ աղոթել, քան քարոզել: Հիսուս Քրիստոսն Իր աշակերտներին երբեք չսովորեցրեց ինչպես քարոզել, այլ՝ ինչպես աղոթել»:

Տ. Լ. Մուդի

Եկեղեցու պատմությունը (4)

Մ.թ. 100-1517թթ.

Ի քանի Պապեր, մասնավորապես Նիկողայոս V-ը (1447-1455թթ.), նպաստեցին Վերածննդի (Ռենեսանսի) շարժմանը. նրանք մարդիկ ուղարկեցին հին ձեռագրերի որոնման համար, և այդ ձեռագրերից վերականգնվածները կրկնօրինակեցին ու թարգմանեցին: Այնուհետև գրադարաններ հիմնեցին ձեռագրերի անվտանգ պահպանման և աստվածաշնչագետների կողմից օգտագործման համար: Նիկողայոս V-ը համարվում է Վատիկանի գրադարանի հիմնադիրը:

Արվեստն ու քանդակագործությունը նոր շունչ ստացավ, և աստվածաշնչային թեմաներով նկարչությունը տարածվեց աշխարհի հռչակավոր նկարիչների կողմից: Լեոնարդո դա Վինչին (1452-1519թթ.) նկարեց «Վերջին ընթրիքը» կտավը, Ռաֆայելը (1483-1520թթ.)՝ «Սիքստինյան Տիրամայրը» կտավը, Միքելանջելոն (1475-1564թթ.)՝ «Վերջին դատաստանը», «Սուրբ Պողոսի դարձը» և «Սբ. Պետրոսի խաչելությունը» կտավները:

Այսպիսով, միջնադարից հետո (այն նաև կոչվում է Մութ դարեր) լուսաբացն սկսվեց, և մարդիկ շատ առումներով սկսեցին վերադառնալ իրական քրիստոնեության, այսինքն՝ Տեր Հիսուսի և Նրա առաքյալների ուսմունքներին, ինչպես գտնում ենք Նոր Կտակարանի էջերում:

6. Կրկնություն

Համառոտ անդրադարձանք առաջին դարի վերջից մինչև 1517 թվականը քրիստոնեություն դավանող եկեղեցու պատմությանը և հետևեցինք եկեղեցու հոգևոր վիճակի վերելքներին և վայրէջքներին:

Այս ուսումնասիրությունից օգտվելու համար պետք է շարունակաբար հարց տանք, թե արդյոք քրիստոնեությունը դավանող մարդկանց ուսմունքն ու սովորությունները համապատասխանո՞ւմ են սուրբգրություններին, թե՞ ոչ: Պողոսը Տիմոթեոսին գրեց հետևյալ խոսքերը. «Մանկուց գիտես Սուրբ գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել

քեզ փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ Տիմ. 3:15):

Այնպես, ինչպես անցյալ դարերի քրիստոնյաները հնարավորություն ունեցան ապրելու իրենց Տիրոջը հաճեցնելով՝ չնայած հալածանքներին և մահապատժին, այսօր էլ մենք նույնպիսի հնարավորություն ունենք՝ չնայած մեզ համար հանգամանքները գուցե կարող են շատ տարբեր լինել:

Նիկիական հանգանակ

Հավատում ենք մեկ Աստծո՝ ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին: Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց Միածին, այսինքն՝ Հոր էությունից: Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե արարած: Նույն ինքը՝ Հոր բնությունից, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ երկնքում և երկրի վրա՝ երևելիներն ու աներևույթները: Որ հանուն մեզ՝ մարդկանց ու մեր փրկության, իջավ երկնքից, մարմնացավ, մարդացավ, ծնվեց կատարելապես Ս. Կույս Մարիամից Ս. Հոգով: Որով ճշմարտապես և ոչ կարծեցյալ կերպով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, որ կա մարդու մեջ: Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով բարձրացավ երկինք, նստեց Հոր աջ կողմում: Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին և մահացածներին: Նրա թագավորությունը չունի վախճան: Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն՝ անեղծ և կատարյալ, որը խոսեց Օրենքի, մարգարեների և ավետարանների միջոցով: Որն իջավ Հորդանանի վրա, քարոզեց առաքյալների միջոցով և բնակություն հաստատեց սրբերի մեջ: Հավատում ենք նաև մեկ, ընդհանրական և առաքելական եկեղեցու, մի մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության: Մեռելների հարության, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանի, երկնքի արքայության և հավիտենական կյանքի:

ՎԵՐՋ

Ծերերը՝ Նոր Կտակարանում

Սիրելի՛ մեծահասակ քույր և եղբայր, այս նոր տարվա շեմին թույլ տվեք հարցնել ձեզ, թե այս տարվա մեջ ի՞նչ եք սպասում՝ Տիրոջ երկրորդ գալուստ՞ին, թե՞ ձեր Իր մոտ գնալուն: Աստված հավիտենից ծառայություն ունի պատրաստած ձեզ համար, ինչպես Աստվածաշունչն է սովորեցնում. «Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոս Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք» (Եփես. 2:10): Աստված մեզ ստեղծելիս չի մոռացել մեր կյանքի վերջին տարիները ծրագրելը. Նա իհարկե ուզում է մեզ գործունյա տեսնել Իր թագավորությունում: Սաղմոսերգուն ասում է. «Ծերության ժամանակ էլ պտղաբեր են լինելու, պարարտ ու դալար են մնալու» (Սաղ. 92:14):

Ուշագրավ է, որ Աստված Իր Որդու աշխարհ գալու պատմության մեջ չանտեսեց ծեր մարդկանց. Նա օգտագործեց չորս մեծահասակ մարդկանց՝ Զաքարիային, Եղիսաբեթին, Աննա մարգարեուհուն և Սիմոն ծերունուն:

Լավոդիան միակ կինն է, որի անվան կողքը գրված է «տատ» բառը (Բ Տիմ. 1:5): Ինչպիսի՜ պատիվ է տրված նրան՝ իր աղջկան ու թոռանն Աստծո վախի մեջ կրթելու:

Ծեր տարիքը նշանակում է ֆիզիկական սահմանափակ կարողություն, թույլ հիշողություն, վատառողջություն... Հիսուսը 12 երիտասարդ աշակերտ ընտրեց, բայց նաև չմերժեց Պետրոսի զոքանչի սպասավորությունը, ով տարիքով ավելի մեծ էր, քան Պետրոսը: Նա այսօր էլ չի մերժում բոլոր նրանց, ովքեր անկախ տարիքից և կարողությունից սիրտ ունեն Իր անունը մեծարելու:

Աստված Հովհաննես առաքյալին Հայտնության տեսիլքը տվեց հենց նրա խոր ծերության տարիքում, մինչդեռ շատերս մտածում ենք, թե նման տեսիլքների մանրամասնությունները հիշելու համար ավելի երիտասարդ միտք ու հիշողություն է պետք, քան 100 տարեկան մարդու միտքն ու հիշողությունն է:

Հաճախ եկեղեցու հզորությունը չափվում է եկեղեցու անդամների երիտասարդների տոկոսով: Եթե մեծամասնությունը մեծահասակ է, ասում են, թե թույլ եկեղեցի է, ձանձրալի, հեռանկար չունեցող եկեղեցի է, սակայն ամբողջ աշխարհով մեկ Աստծո գործին նվիրաբերողների, աղոթողների մեծ խումբը հենց ծերերն են, թոշակառուները: Աստծո գործում թոշակի չենք անցնում:

Հիշենք նաև, որ մարդու հոգին չի ծերանում, մարմինն է ծերանում ու դրա հետ կապված ամեն ինչ, սակայն գիտենք, որ չնայած մեր դրսի մարմինը մաշվում է, նորն ենք հագնելու (Բ Կորնթ. 5:1):

Մենք երբեք չպետք է վախենանք ծերությունից: Վախենա՛նք Տիրոջ համար անգործ մնալուց, վախենա՛նք ծուլությունից, բամբասանքից, մեծամտությունից, հպարտությունից, անձնակենտրոնությունից, բայց ո՛չ ֆիզիկական սահմանափակումից, հիվանդությունից...

Թերևս սաղմոսերգուի նման Տիրոջն ասում եք. «Ծերության ժամանակ մի՛ թողնիր ինձ. ուժս պակասած ժամանակ ինձ մի՛ լքիր» (Սաղ. 71:9): Տերը պատասխանում է՝ ասելով. «Ծերության ժամանակ անգամ Ես և քո ալեհերության օրերին Ես պիտի կրեմ ձեզ: Ես ստեղծեցի ու Ես պիտի կրեմ ու պիտի ազատագրեմ ձեզ» (Եսայի 46:5):

Ծերությունը կյանքի անգործության փուլը չէ, այլ ընդհակառակը՝ յուրահատուկ գործունեության շրջան: Ամեն մարդ չէ, որ հասնում է խոր ծերության. ըստ Աստծո Խոսքի՝ երկար օրերը օրհնություն են Տիրոջ կողմից: Թող որ Քրիստոսի եկեղեցու ոչ միայն երիտասարդները, այլև ծերերը ծառայեն Տիրոջն իրենց ուժի և կարողության չափով, Աստծո տված պարգևներով:

Վարդան Սարգիսյան

❋ ❋ ❋

Եվս մեկ առաջադրանք

Նույնիսկ հիանալի տոներից հետո շատերն աշխատանքի վերադառնալու ճնշվածություն են զգում: Մեր հասարակությունը կարծես թե բաժանված է երկու խմբի՝ ծանրաբեռնված և ոչ ծանրաբեռնված աշխատողների: Նոր Զելանդիայում վերջերս լսեցի մի ռադիոհաղորդում առողջապահական նոր վտանգի մասին: Կհավատաք թե ոչ, խոսքը սթրեսի պակասության հիվանդության մասին էր: Մարդկանց մեծամասնությունն առանց մարտահրավերների կյանք է վարում: Այս մարդիկ ենթակա են ֆիզիկական անգործության, քանի որ չունեն առաջընթացը խթանող բավարար սթրես, որն իրենց դրդում է օգտակար գործողությունների: Այս միտքը համեմատե՛ք՝ հետևելով հազարավոր այլ մարդկանց, ովքեր ծանրաբեռնված են ու աշխատում են սթրեսի տակ, ինչի պատճառով բժիշկների, խորհրդատուների, վերականգնողական դասընթացների օգնության կարիք են զգում կամ պարզապես փորձում են ելք գտնել տարբեր տեսակի կախվածությունների միջոցով: Կան գերաշխատող և ոչ գերաշխատող, չափազանց մեծ սթրեսով աշխատող և առանց սթրեսի աշխատող մարդիկ:

Նման իրավիճակներ կարելի է նկատել նաև մեր եկեղեցիներում: Որոշ քրիստոնյա ընտանիքների վրա դրված եկեղեցական պարտավորությունները վախեցնում են ինձ: Նրանք կարծես չափազանց շատ են աշխատում՝ անցնելով սթրեսային իրավիճակներով: Իսկ՝ ուրիշները կարծես թե քիչ են աշխատում և ընդհանրապես սթրես չեն ապրում: Երկու կողմերն էլ կարող են վնասակար լինել: Մենք նման ենք ջութակի լարերի: Չափազանց լարվածության դեպքում դրանք կոտրվում են, անբավարար լարվածության դեպքում երաժշտություն չեն արձակում: Չափից ավելի մեծ սթրեսի տակ գտնվող մարդիկ կոտրվում են, իսկ ուրիշները, շատ քիչ սթրեսի տակ լինելով, քիչ բան են իրագործում: Երբ քրիստոնեական ծառայության առաջարկ է տրվում, մի խումբ մարդիկ դժվարությամբ են «ոչ» ասում կամ նույնիսկ անհնար են համարում մերժելը, մինչ մյուսներին նույնքան դրժ-

վար է ծառայությանն «այո» ասելը: Այս խմբերից յուրաքանչյուրը խնդիր ունի:

Ովքեր չափազանց մեծ սթրեսի տակ են, լավ կլինի խորհրդածեն հետևյալ հարցի շուրջ. «Ինչո՞ւ եմ դժվարանում «ոչ» ասել»: Կան բազմաթիվ պատճառներ, որոնք ոմանց ստիպում են անհրաժեշտից ավելի գործունեություններում ընդգրկվել:

Մյուս կողմից, նրանք, ովքեր իրենց կյանքում քիչ մարտահրավերներ ունեն, պետք է իրենք իրենց հարցնեն, թե ինչո՞ւ են դժվարանում «այո» ասել, երբ ծառայության համար առիթ է տրվում իրենց: Նոր մարտահրավեր ունենալ նշանակում է ընդունել նոր բան: Այն ներառում է հավատք. հավատալ, որ ինչ-որ բան պետք է տալ, և որ Աստված ուժ կտա ձեզ՝ տալու այն: Ինչպես Քրիստոսը Պետրոսին հրամայեց դուրս գալ նավակից ու ջրի վրա քայլել (Մատթ. 14:28), այդպես Նա պատվիրում է մեզ դուրս գալ մեր հարմարավետ տարածքից: Աստծո հետ մտերիմ կյանքն օգնում է մեզ «ոչ» ասելու, երբ այդպես անելու անհրաժեշտություն է լինում, նմանապես՝ ինչ-որ նոր մարտահրավերի «այո» ասելու, եթե իսկապես Աստված է մեզ առաջնորդողը:

Միայն Նրա ներկայության մեջ ապրողները և իրենց ինքնությունն Աստծո մեջ ապրել սովորողներն իրենք իրենց հանգիստ կզգան, երբ հարկավոր լինի որևէ ծառայության «ոչ» ասել կամ քաջություն ունենալ «այո» ասելու, երբ ծառայության համար ճիշտ հնարավորություն ընձեռնվի:

Զգուշացե՛ք զբաղված կյանքի անբերրիությունից:

Ռեքս Տիրլավ

Վրեժխնդիր մի՛ եղեք

Հալեպում մի հայ կոշկակար կար, ով Պողոս եղբայր Աբաջյանից երբեմն հողաթափեր էր գնում՝ գյուղեր տանելու ու ծախելու համար: Մի օր այս մարդն իր փորձառություններից մեկը պատմեց մեր

եղբորը: Թույլ տանք, որ կոշկակարն անձամբ մեզ պատմի պատահածը: Անձրևոտ երեկո էր: Պատրաստվում էի կրպակս փակել: Գնացի լապտերն անջատելու, երբ հանկարծ մի գյուղացի ներս մտավ, բարևեց ինձ ու աթոռին նստեց. մահմեդական էր: Ասաց, թե կոշիկի ներբանը ծակվել է, գետնին կանգնելու ժամանակ մեջը ջուր է մըտնում ու իրեն անհանգստացնում: Խնդրեց, որ այն նորոգեմ:

Ասացի, որ պետք է խանութս փակեմ. ժամանակը լրացել է, ուստի չեմ կարող ասածն անել: Մարդն ասաց, որ պատրաստ է կրկնակի վճարել և աղաչեց, որ իրեն չմերժեմ: Հակառակ մարդու պաղատանքին՝ սիրտս կարծրացրի և ասացի, որ չեմ կարող: Մարդը հուսախաբ և գլխիկոր, հեռացավ: Ես էլ կրպակս փակեցի ու տուն գնացի: Անցան ամիսներ: Մի առիթով մի գյուղ ապրանք տարա վաճառելու: Երեկոյան հանկարծ այս մարդն ինձ հանդիպեց: Ինձ մոտենալով՝ նա մեծ քաղաքավարությամբ և անկեղծությամբ ինձ հետ ձեռնվեց և իր գյուղ այցելելուս համար ուրախություն հայտնեց: Հետո ինձ իր տուն հրավիրեց: Շնորհակալություն հայտնեցի ու մերժեցի, սակայն մարդն այնքան ստիպեց, որ զիջեցի ու գնացի: Կարծեցի, թե սուրճով խնդիրը կլուծվի, բայց քիչ անց փառավոր սեղան բացեցին ինձ համար: Այնքա՜ն էի խղճահարվում, այնքա՜ն անհանգիստ էի զգում, որ ուզում էի գետինը բացվեր ու ինձ կուլ տար: Սկսեցինք ուտել, բայց կերածիս ուր գնալը չիմացա: Ճաշելուց հետո վեր կացա, որ գնամ, բայց բարեկամս ասաց, թե իրենց հետ պիտի գիշերեմ, ու ինձ ստիպեց, որ ընդունեմ հրավերը: Հանգիստ գիշեր անցկացրինք: Հաջորդ առավոտ տանտիկինը փառավոր նախաճաշ էր պատրաստել: Այն, ինչ գյուղն արտադրում էր՝ ցորենի հաց, կաթ, պանիր, ձիթապտուղ, մեղր, բոլորը սեղանի վրա էր դիզված: Կերանք, շնորհակալություն հայտնեցի ու դուրս եկա: Խորը շունչ քաշեցի, բանտից դուրս եկածի պես զգացի, ամոթի զգացումից կարծես հիվանդացա:

Աբաջյան եղբայրն ավելացրեց. «Եթե մահմեդականը կարող է այսպիսի ազնիվ հոգի ցույց տալ, հապա հավատացյալն ինչպե՞ս պետք է վարվի»: «Չարից մի՛ պարտվիր, այլ չարը բարիով հաղթիր» (Հռոմ. 12:21):

Քաղված՝ «Օրհնաբեր նռնենին» գրքից

Զգուշացե՛ք անգործությունից

Բ Թես. 3:11-13

Աշխատանքից խուսափելը

Հաճախ ճշմարիտ է այն, որ եթե մարդը կարող է խուսափել աշխատանքից, նա այդպես էլ վարվում է: Բայց արի ու տես, որ կամենում է վայելել աշխատանքի պտուղները: Հեթանոս բանաստեղծ Թերենսն ասում է. «Ingenium est hominum a labore proclive ad libidinem» (բոլոր մարդկային էակներին բնորոշ է աշխատանքից հաճույքին հակվելը): Բոլորն էլ սիրում են փառք ու հարստություն: Ամենքն էլ ցանկանում են բարձր դիրքի հասնել աշխարհում ու նպատակաուղղվում են կարևոր տեղ զբաղեցնել: Ինչևէ, հայտնվելով այդտեղ ու զգալով աշխատանքն ու անհանգստությունը՝ շուտով հիասթափվում են:

Առակաց գիրքը ծուլության մասին

Առակաց գիրքը ցույց է տալիս ծուլության որոշ չար պտուղներ: Դա ամոթ է բերում. «Նա, ով ամռանը հավաքում է, իմաստուն որդի է» (Առակ. 10:5): Ծուլությունը նաև աղքատության է հանգեցնում. «Մի՛ սիրիր քունը, որպեսզի չաղքատանաս, աչքերդ բա՛ց և հացով կկշտանաս» (Առակ. 20:13): Ծուլության հաջորդ հետևանքը քայքայումն է. «Ծույլ մարդու արտի կողքով ու անհասկացող մարդու այգու կողքով անցա: Ամենուրեք փշեր էին բուսել, դրա մակերեսը եղինջներն էին ծածկել, և նրա քարե պատը փլված էր» (Առակ. 24:30,31): Ալարկոտությունը կարող է նույնիսկ մահվան հանգեցնել. «Ծույլի ցանկությունն սպանում է նրան, քանի որ նրա ձեռքերն աշխատել չեն ուզում» (Առակ. 21:25): Ծուլության մեջ հարատևելն անմտության նշան է. «Իր հողը մշակողը կկշտանա հացով, բայց թեթևսոլիկության ետևից ընկնողն անսիրտ է» (Առակ. 12:11):

Ծուլությունը հոգեւոր եւ նյութական խնդիր է

Քանի որ ծուլությունը հոգևոր խնդիր է, ինչպես նաև նյութական, դրա լուծումը նաև հոգևոր բնույթի է: Քրիստոսի իշխանությամբ Պո-

ղոս առաքյալն աշխատելու պատվեր տվեց, քանզի դա Տեր Հիսուսի կամքն է: Երբ աշխատանքն արվում է Քրիստոսի համար, աշխատողը ապահովագրված է անպտղությունից ու հարստության հասնելու դաժան պայքարից: Սա ճշմարիտ է, քանի որ Աստվածաշունչը մեզ սովորեցնում է ամեն բան անել Տեր Հիսուսի համար՝ երբեք որպես նպատակ չունենալով փողը: Ուստի բոլոր աշխարհիկ պաշտոնները, հիրավի երկրորդային են որպես աշակերտ՝ քրիստոնյայի առաջին կոչման կողքին:

Հետաքրքրական է տեսնել, թե ինչ է կատարվում, երբ ո՛չ Սուրբ Գրերը, ո՛չ էլ կառավարությունը մարդկանց չեն դրդում աշխատելու: Այդժամ ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ ո՛չ խղճի խայթ են զգում և ո՛չ էլ վախ՝ ապրելով իրենց հասարակության աղքատ տնտեսության նպաստներով:

Քրիստոնեական աշխատանքային էթիկան կարող է իրագործվել միայն քրիստոնեական լիարժեք հավատքի լույսի ներքո: Հակառակ դեպքում առաջ են գալիս շեղումներ ու կաշառակերություն: Պողոս առաքյալը հավատացյալներին պատվիրում էր աշխատել՝ մատնանշելով, թե աշխատանքն ինչպես պետք է արվի Քրիստոսի համար:

Երբեմն հավատարիմ աշխատողները, տեսնելով այլոց փափկասուն կյանքի վայելքի մեջ, կարող են վհատվել, սակայն հիշեք՝ Տերը մեզ պատվիրում է չձանձրանալ: Աստծո Խոսքը մեզ դիմակայելու, դրա պատվերներին ու օրինակներին հետևելու ուժ է տալիս: Առանց Աստծո զորության՝ մենք դատապարտված ենք վհատվելու ու դառնանալու աշխատանքից, հատկապես երբ աշխատում ենք Նրա այգում: Մի՛ հոգնիր: Աշխատի՛ր Փրկչի համար, մինչև երկրի վրա գործդ կատարես:

Դոկտ. Չեսլո Բասսարա

❋ ❋ ❋

Փրկության վստահությունը

Աստծո Խոսքն ինչպե՞ս է ապացուցում մեզ փրկության վստահությունը: Երկու ապացույց ունենք:

Առաջինը արտաքին ապացույցն է: Ինչպես մեր ծննդյան վկայականն է փաստում մեր՝ ում զավակ լինելը, այդպես էլ հավատացյալի վերստին ծնունդ ունենալու փաստաթուղթը, վավերագիրը Աստվածաշունչն է:

Հովի. 1:12-ում այսպես ենք կարդում. «Բայց որոնք ընդունեցին Իրեն, նրանց Նա Աստծո որդիներ դառնալու զորություն տվեց, նրանց, որ կհավատան Իր անվանը»:

Հովի. 3:16-ն ասում է. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

Ա Հովի. 5:13-ն ասում է. «Այս ամենը գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որպեսզի իմանաք, որ դուք հավիտենական կյանք ունեք, և որպեսզի հավատաք Աստծո Որդու անվանը»:

Այս համարներն աստվածային խոստումներ են: Աստված խոստում էր տվել, և Քրիստոսը խաչի վրա կատարեց այդ խոստումը, ու Սուրբ Հոգին այն իրագործեց՝ մեզ Քրիստոսի զավակներ դարձնելով:

Երկրորդը ներքին ապացույցն է: Երբ երեխա է ծնվում, բնածին փափագով իր մոր կաթն է փնտրում: Մենք էլ, երբ հոգևորապես ծնվում ենք Աստծուց, Նրանից հոգևոր սնունդ ստանալու փափագ ենք ունենում: Սա ներքին ապացույց է այն մասին, որ մենք վերստին ծնված ենք: Աստծո հետ միշտ հարաբերելու, Իր փառքի համար ապրելու փափագ ենք ունենում: Քանի որ մարմնի մեջ ենք ապրում, մեղք ենք գործում, սակայն Աստված սրբագործում է մեզ, որպեսզի քրիստոսանման լինենք մեր ապրելակերպով ու կարողանանք մեղքին «ոչ» ասել:

Եթե կան քույրեր ու եղբայրներ, որոնք փրկության վստահություն չունեն, զորացնենք ու սրտապնդենք այդպիսիներին: Աստված, որ գործ է սկսել ձեր մեջ, կարող է մինչև վերջ այդ ավանդը պահել: Արդյոք վստահո՞ւմ ես Աստծուն, որ Իր սկսած գործը քո մեջ կատարելագործելու է:

Պատմում են, թե Կանադայում Նիագարա ջրվեժի մի կողմից մյուսը պարան էր քաշված, և Պլանտի անունով անձնավորություն քայլում էր այդ պարանի վրայով: Ժողովուրդը հիացմունքով նայում էր այս ինքնավստահ մարդուն: Իր ճկունությունը և հաջողությունը բազմաթիվ անգամներ ցուցադրելուց հետո նա հարցնում է ժողովրդին, թե արդյոք հավատո՞ւմ է, որ կկարողանա մի մարդու իր ուսերին առած անցնել այդ պարանով: Ժողովուրդն «այո» է բացականչում, բայց երբ մեկին մոտենում է՝ իր ուսերին վերցնելու, անձը չի համարձակվում համաձայնել, որովհետև հակառակ հավատալուն՝ վստահության պակաս է ունենում: Սա նման է այն մարդկանց, ովքեր պատճառաբանություններ, վստահության պակաս ունեն Աստծո փրկագործության վերաբերյալ: Մի քանի արտահայտություններ եմ գրել որպես օրինակ.

«Վախենում եմ, որ բավարար չեմ հավատացել»: Շատ կամ քիչ հավատալու մեջ չէ փրկագործությունը: Հավատքը չափի հետ կապ չունի: Հարցն այն է, թե ո՞ւմ ես հավատացել: Մեր հավատքը և վստահությունն ո՞ւմ վրա է:

«Վախենում եմ, որ բավարար նվիրում չունեմ»: Եփեսացիներին գրքում այսպես է ասում Սուրբ Հոգին Պողոս առաքյալի միջոցով. «Որովհետև շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարգևն է, ո՛չ թե գործերից, որպեսզի ոչ մեկը չպարծենա»: Վստահելով փրկվեցիր. այդ փրկությունը նվեր է քեզ: Մեր գործերով չենք փրկվում, այլ համաձայն Իր ողորմության՝ Նա փրկում է մեզ վերստին ծնունդի միջոցով ու Սուրբ Հոգու նորոգությամբ: Գործերը փրկության հետևանքն են, ոչ թե նախապայմանը: Բազմաթիվ եկեղեցիներ և հավատացյալներ բաժանված են իրարից՝ փրկության և գործերի մասին անհասկացողություն և անհամաձայնություն ունենալով: Փիլ. 2:12-13. «Հետևաբար, իմ սիրելինե՛ր, ինչ-

պես միշտ հնազանդ եք եղել, ո՛չ միայն իմ ներկայությամբ, այլ առավել ևս հիմա՝ իմ բացակայությամբ, ահով ու դողով գործադրեք ձեր փրկությունը, որովհետև և՛ կամենալը, և՛ կատարելը Աստված Ինքն է, որ գործում է ձեր մեջ՝ Իր բարեհաճության համաձայն»: Որովհետև Աստված մեր հոգիներում փրկություն գործեց, մենք էլ փրկությունն արտաքնապես ի գործ դնենք:

«Մկրտված չեմ»: Շատերը կարծում են, որ եթե մկրտված չեն, Երկինք չեն գնալու: Մկրտությունով չէ անձը փրկվում: Անձը մկրտվում է, քանի որ փրկված է: Եբր. 7:25-ն ասում է. «Ուստի և Նա կարո՛ղ է լիակատար փրկել բոլոր նրանց, ովքեր Իրենով են մոտենում Աստծուն, քանի որ Նա հավիտյան ապրում է՝ նրանց համար բարեխոսելու»:

Ուրեմն երբ անձը փրկվի Հիսուսի միջոցով, նաև պետք է մինչև վերջ տոկա ու համբերի, որ կենաց դափնեպսակն ընդունի: Եբր. 10:26-27-ն ասում է. «Որովհետև, եթե ճշմարտության գիտությունը ընդունելուց հետո դիտավորյալ մեղք գործենք, նրանից հետո այլևս մեղքերի համար զոհ չի մնում, այլ՝ դատաստանի զարհուրելի սպասումը և կրակի բարկությունը, որ լափելու է հակառակորդներին»:

Փրկությունը գործերից չէ, այլ գործերը փրկության արդյունք են: Երբ փրկվում ես, պետք է լինես մի ծառի նման, որ ժամանակին տալիս է իր պտուղը: Շատ հունդ ցանողներ ունենք, սակայն աղոթքս է, որ մենք էլ այդ հունդերը ջրողներ լինենք, իրար ամրապնդողներ, որպեսզի աճեն ու պտուղ տան Աստծո փառքի համար:

Ներսես եղբ. Պոյաճյան

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

❋ ❋ ❋

Ո՞վ կարող է լուծել մեր խնդիրները

Մատթեոս 9:1-8,18-38

Տարիներ առաջ կինս պատմում էր իր զրույցների մասին: Նա զրուցել էր տարբեր մարդկանց հետ, որոնցից մի մասին լավ էր ճանաչում, մյուսների մասին քիչ բան գիտեր: Նա ոգևորությամբ էր խոսում, և դեմքին նկատելի էր ցավը: Երբ ընդհատեցի, նա մի պահ կանգ առավ և ասաց. «Բոլորն էլ խնդիրներ ունեն, այս ի՞նչ է կատարվում, որքա՜ն ցավ կա ամենուրեք»:

Այո՛, ամենուրեք խնդիրներ կան: Նորածինները, երեխաները, երիտասարդները, ծնողները, ամուսինները, իշխանավորներն ու քաղաքագետները, եկեղեցիների անդամներն ու առաջնորդները, դու, ես... բոլորս էլ խնդիրներ ունենք: Բազմազան խնդիրներ կան, բայց ամենամեծ խնդիրն այն է, որ քիչ են խնդիր լուծողները: Եթե ճանաչեիր լավագույն խնդիրներ լուծողին, քեզ համար նշանակություն չէր ունենա, թե որքան է մեծ քո խնդիրը:

Հիվանդությունը, հանցավորության զգացումը, ֆինանսական անապահովությունը, սիրելիի կորուստը, կասկածները, վախերը, միայնակությունն ու ընկճախտը խնդիրներ են, որոնք պետք է ամեն օր լուծել: Հաճախ մարդիկ իրենց խնդիրները լուծելու համար փորձում են ամեն բան՝ բացի ճիշտ տարբերակից: Իսկ ո՞րն է ճիշտ լուծումը. գընալ ճիշտ լուծող վարպետի՝ Աստծո մոտ: Ոմանց համար դա չափազանց պարզունակ ու ոչ իրատեսական է, ուստի նրանք իրենց խընդիրների լուծման համար ապարդյուն փնտրում են ինչ-որ մեկին:

Մատթեոս 9-ում տեսնում ենք, որ Հիսուսը ֆիզիկական, հուզական և հոգևոր խնդիրները լուծելու կարողություն և իշխանություն ունի: Անշուշտ, խնդիրն այն է, որ մարդիկ չեն ուզում ընդունել Հիսուսին: Ոմանք անտարբեր են, ոմանք էլ բարկացած են նրա ազդարարություններից: Բայց նրան հավատացող, նրա ազդարարություններն ընդունող և նրան մոտեցող մարդկանց կյանքի մասին հոգ է տարվել, իսկ խնդիրները լուծվել են: Ցույց տալով իր բժշկող զորությունը՝ Հիսուսը կասկածամիտ ու ըմբոստ մարդկանց ապացուցեց, որ ինքը

մեղքեր ներելու իշխանություն ունի: Արդյունքն ակնթարթային էր ու հիասքանչ: Մարդիկ սկսում էին զարմանալ ու վախենալ Աստծուց (Մատթ. 9:8):

Հետո մեկը մյուսի հետևից նրա ճանապարհին հայտնվեցին անդամալույծը, իշխանավորը, 12 տարի արյունահոսող կինը, երկու կույրերը և խուլ դիվահարը: Հիսուսն ազդու, բայց մեղմ խոսքերով հոգում էր նրանց անձնական կարիքներն ու յուրաքանչյուրին տալիս էր խաղաղություն ու համարձակության պատգամ: Հիսուսը շարունակում էր իր ծառայությունն ու քարոզելը, ուսուցանելը, բժշկելն ու Բարի լուրը տարածելը: Եվ այսօր էլ նա շարունակում է նույնն անել:

Սիրելի՛ բարեկամ, թերևս Աստված միշտ չէ, որ քեզ կտա քո խնդիրը լուծելու իմաստությունը, բայց վստա՞հ եղիր, որ Հիսուսն ի զորու է դա լուծելու: Նա ունի այնքան կարեկցանք, որ կարող է դա զգալ, ունի այնքան սեր, որ կարող է հոգ տանել քեզ համար, և այնքան իմաստություն ունի, որ կարող է դա լուծել: Քո անհանգստությունն ու հոգսերը հանձնի՛ր նրան, ով մշտապես կարողանում է լուծել խնդիրները:

Վեր. Հովսեփ Հովսեփյան

Քաղված՝ «Աստծո արհեստանոցը» գրքից

«[1]Քեզ փառաբանություն է սպասում Սիոնում, ո՛վ Աստված, ու Քեզ խոստացված ուխտերը կատարվելու են: [2]Ո՛վ աղոթքի լսող, դեպի Քեզ է գալու ամեն մի մարմին: [3]Անօրենությունները ծանրացան վրաս, իսկ մեր հանցանքները, Դո՛ւ ես քավելու դրանք: [4]Օրհնյալ է այն մարդը, ում Դու ընտրում ես ու Քեզ ես մոտեցնում, որպեսզի բնակվի Քո սրահներում: Բավարարվելու ենք Քո Տան՝ Քո սուրբ տաճարի բարությամբ: [5]Ակնածանք ներշնչող արդար արարքներով ես պատասխանելու մեզ, ո՛վ մեր փրկության Աստված, որ երկրի բոլոր ծայրերի ու հեռավոր ծովի վրա եղողների հույսն ես» (Սաղմոս 65:1-5):

Այդ մարդը դու ես

«Այդ մարդը դու ես» (Բ Թագ. 12:7)։ Սրանք էին այն բառերը, որոնք դուրս եկան Նաթան մարգարեի բերանից՝ Դավթին արթնացնելու իր սոսկալի մեղքից։ Սատանայի մեծ գործն է քնեցնել մեղավորներին ու աշխատել, որ մոռանան իրենց Արարչի և Աստծո դեմ գործած չար և զզվելի մեղքերը։

Երբ Հուայթֆիլդը՝ Աստծո նվիրյալ և եռանդուն ծառան, քարոզում էր Բլիմաութիում 1743թ.-ին, շատերը հալածում էին նրան և ուզում էին սպանել։ Մի օր, երբ նա քարոզում էր, Թենըը անունով մի նավահյուսն հեռվից լսեց նրա ձայնը։ Սա իր 5-6 ընկերների հետ ուզեց գնալ ու վռնդել քարոզչին այնտեղից։ Այս նպատակով իրենց գրպանները քարերով լցրին։ Սակայն երբ Թենըը մոտեցավ ու տեսավ, թե ինչ թախանձախնդրությամբ էր Հուայթֆիլդը աղաչում մեղավորներին, որ Քրիստոսին գան, հիացմունքով լցվեց և իր որոշումը չկարողացավ իրագործել։ Նա տուն գնաց՝ խորապես ազդված։ Հաջորդ երեկո նորից եկավ քարոզաժողովին։ Հուայթֆիլդը խոսում էր Փրկչին խաչողների մեղքի մասին։ Երկար խոսելուց հետո ուշիուշով նայեց Թենըրին ու հուզումնալից ասաց.

- Այդ մարդը դու ես։

Այս բառերը ուժեղ ազդեցին Թենըրի վրա։ Նա զգաց իր մեղքերի սոսկալի մեծությունը և սրտի ցավով բացականչեց.

- Աստվա՛ծ, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս։

Հետո քարոզիչը սկսեց պատմել Հիսուսի ձրի և առատ շնորհքի մասին, ասաց, որ Ինքն է հրամայել քարոզել նրանց, ովքեր սպանեցին Իրեն։ Այս լսելով՝ Թենըը քաջալերվեց և Հիսուս Քրիստոսին հանձնվեց։ Այո՛, նա տեսավ, որ մեղավորներից չարագույնի համար իսկ Աստծո շնորհքը շատ առատ է։

Սիրելի՛ ընթերցող, արդյոք Աստծո Խոսքում կարդացե՞լ ես Աստծո թշնամիների մասին (Հակ. 4:4), որոնք միայն մարմնի համար են սերմանում (Գաղ. 6:8), Աստծուն չեն ճանաչում ու մեր Տեր Հիսուս Քրիս-

տոսի Ավետարանին չեն հնազանդվում (Բ Թես. 1:8), որոնց վերջը կորուստ է (Փիլ. 1:8), որոնք պատժվելու են հավիտենական կորըստով Տիրոջ երեսից ու Նրա զորության փառքից (Բ Թես. 1:9), որոնց բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճն է լինելու (Հայտ. 21:8): Երբ կարդում կամ լսում ես այս բաները, արդյոք գիտակցո՞ւմ ես, որ «այդ մարդը դու ես»:

Տե՛ս և մտածի՛ր, թե որտեղ ես: Նայի՛ր, թե ո՞ւմ դեմ ես մեղանչել և դեռ մեղանչում ես: Նա, ով երկնքում և երկրի վրա ամբողջ իշխանությունն ունի, որ ամեն բան տեսնում է, գիտի և ամեն տեղ ներկա է, որ կարողություն ունի քեզ հավիտենական կրակի մեջ նետելու, որի առջև անպայման կանգնելու ես: Օ՜հ, դու Նրա դեմ ես մեղանչում: Մեղավո՛ր, արդյոք մտածե՞լ ես սրա մասին և գիտե՞ս»:

Սակայն հիշի՛ր, որ Տերը տակավին սիրում է քեզ անպատմելի սիրով և ուղարկել է Իր սիրելի Որդուն, որպեսզի քեզ՝ կորածիդ, փնտրի ու փրկի (Ղուկ. 19:10): Նա պատրաստ է ներելու. «Ամեն մեղք և հայհոյություն կներվի մարդկանց» (Մատթ. 12:31): Իր շնորհաց գերազանցությունը ցույց տալու համար Նա խոնարհվում և փրկում է ամենապիղծ, թշվառ, հուսահատ և ողորմելի մեղավորներին՝ առանց նկատելու նրանց մեղքերի բազմությունը, ծանրությունն ու չարությունը: Շատերը, այո՛, շատերը գալու են Արևելքից, Արևմուտքից, Հյուսիսից և Հարավից՝ Գառնուկի երկնային երգը երգելու, որոնք Աստծո ձրի շնորհքով արդարացան և իրենց հանդերձները ձյունից ավելի ճերմակ դարձրին: Նրանք մի ժամանակ սատանայի ծառայության տակ սևացած, կուրացած և գարշելի էին, բայց գալու են սրբերի հետ ժառանգակից լինելու և արևի պես փայլելու (Մատթ. 13:43):

Ո՛վ քնած, թշվառ մեղավոր, որ թափառում ես կորուստի եզրին, հենց հիմա կանչի՛ր Հիսուսին:

Քաղված՝ «Ընտիր ժողովածու
հոգևոր պատմությունների» գրքից